ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» հոկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-77/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2016թ. թիվ 1/73-1/494-16 և 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրություններով ներկայացված «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի 16.12.2015թ. թիվ 306/2 գրության հիման վրա, 14.01.2016թ. թիվ 1/73-1/494-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝

խնդրելով ուսումնասիրել «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 12.03.2016թ. թիվ 01/04.1/931-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2016թ. թիվ 1/73-1/494-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ

մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.01.2016թ. թիվ 01/04.1/91-16 գրությամբ դիմել է «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան Ընկերության կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 19.10.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-75/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-Ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.12.2015թ. թիվ 306/2 գրությամբ ներկայացրել է «ՀԱՅԿԵՆՍ-ՊԸԱՊՁԲ-2015» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է կատարվել Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, համաձայն որի «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 79 442 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 19.10.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-77/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-77/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2016թ. թիվ 1/73-1/494-16 և 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրություններով ներկայացված «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀԱՅԿԵՆՍ-ՊԸԱՊՁԲ-2015» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն ***08.12.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.12.2015թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին:

3. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

4. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 11.12.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 14.12.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 79 442 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.12.2015թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. Կենտրոնը 04.02.2016թ. թիվ 01/04.1/298-16 գրությամբ արձանագրել է «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-77/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի 16.12.2015թ. թիվ 306/2 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն ***08.12.2015թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀԱՅԿԵՆՍ-ՊԸԱՊՁԲ-2015» ծածկագրով պարզեցված ընթացակարգին:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2015թ. տրամադրված զրակացության համաձայն՝ «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (08.12.2015թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 79 442 ՀՀ դրամի չափով:***

Հետևաբար Կենտրոնը գտնում է, որ «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում 08.12.2015թ. հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:***

Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-77/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ ***Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (08.12.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին տրամադրելու օրվա դրությամբ առկա չէ որևէ տեղեկատվություն «ԷԿՍՊԱԿ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 08.12.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 14.01.2016թ. թիվ 1/73-1/494-16 և 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրություններով ներկայացված «ԷԿՍՊԱԿ»

ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00142241) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-77/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան